ԿՐԹԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄՏՑՎԵԼ

Վրաստանի կրթության ու գիտության նախարարության նախաձեռնությամբ ավարտվել է Ազգային ուսումնական ծրագրում փոփոխություններ մտցնելու վերաբերյալ աշխատանքների առաջին փուլը: Թարմացված փաստաթուղթը ենթադրում է՝ ավելի մեծ ինքնավարության հնարավորություն պետական եւ մասնավոր դպրոցներին:

Փոփոխությունները վերաբերում են ուսանում-ուսուցման պլանավորման եւ կառավարման հետ կապված բոլոր բաղադրիչներին, ներառյալ՝ ուսանում-ուսուցման սկզբունքները, նպատակներն ու բովանդակային առաջնահերթությունները, ինչպես նաեւ՝ դասավանդման մեթոդները, գնահատումը եւ ուսումնական գործընթացի կազմակերպումը: Արդյունքում, ուսանում-ուսուցման յուրաքանչյուր բաղադրիչ ավելի շատ միտված է հանրակրթական հաստատություններին աջակցելու եւ ավելի շատ հնարավորություններ է ընձեռում դպրոցներին ուսումնական գործընթացը ստեղծագործաբար ծրագրելու՝ հաշվի առնելով աշակերտի լավագույն շահերը:

Ըստ փոփոխությունների՝

❒ Հստակ սահմանվել է, թե ինչ է ենթադրում աշակերտակենտրոն, խորացված ուսանում-ուսուցումը:

❒ Սահմանվել են այն սկզբունքները, որոնց հիման վրա ձեւավորվում են ուսանում-ուսուցման արդյունքները եւ միջանկյալ ուսումնական նպատակները:

❒ Հստակեցվել են այն սկզբունքները, որոնց հիման վրա ուսուցիչները պետք է իրականացնեն որոշող եւ զարգացնող գնահատումը:

❒ Հստակեցվել է Դպրոցական ուսումնական պլանի գործառույթն ու նշանակությունը:

❒ Նորովի են ձեւակերպվել Ազգային ուսումնական պլանի նպատակները (Ընդհանուր կրթության ազգային նպատակների, Որակավորումների շրջանակի եւ 21-րդ դարի իրավասությունների հիման վրա):

❒ Ըստ աստիճանների՝ նորովի են ձեւակերպվել առարկայական խմբերի նպատակները: Մասնավոր դպրոցներին թույլատրվել է ինքնուրույն որոշել, թե ինչ առարկաներ են դասավանդելու (ուսուցման ինչ արդյունքներ են սահմանելու) այդ նպատակներին հասնելու համար:

❒ Ազգային ուսումնական պլանից հանվել են մեթոդական առաջարկությունները (չեղարկվել է երրորդ դուռը, որտեղ ներկայացված էին խորհուրդներ, թե ինչպես կարելի է պլանավորել տարեկան ծրագրերը):

❒ Վերացվել են որոշող գնահատման բաղադրիչներն (դասարանային, տնային, ամփոփիչ) ու մոդելները: Դպրոցներն իրենք կարող են ստեղծել որոշող գնահատման յուրօրինակ համակարգ եւ սկզբունքներ, համաձայն որոնց՝ դպրոցական համակարգում գրանցված գնահատականները կվերածվեն Ազգային ուսումնական պլանով սահմանված 10 միավորանոց համակարգի:

❒ Մասնավոր դպրոցներին թույլատրվել է սահմանել ոչ թե դասարանի, այլ աստիճանի հաղթահարման շեմը:

❒ Եթե աշակերտի՝ դասարանի որեւէ առարկայից տարեկան միավորը 5.0-ից պակաս է, դպրոցը պարտավոր է աշնանային քննությունից առաջ աշակերտին առաջարկել ռեմեդիացիայի (շտկողական կամ հետեւանքների վերացման) ծրագիր:

❒ Ռեմեդիացիայի ծրագիր՝ թեթեւացված եւ արագացված ուսումնական ծրագրի տեսքով, դպրոցը պետք է առաջարկի նաեւ այն աշակերտներին, որոնք կրթությունից դուրս են մնացել կամ ուսումը թողնելու բարձր ռիսկային խմբում են: Ուսումնական ծրագրի բովանդակությունը որոշում է հենց դպրոցը՝ Ազգային ուսումնական պլանի հիման վրա:

❒ Դպրոցը, համապատասխան հիմնավորումներով, ինքն է սահմանում դպրոցական ժամային ցանցը՝ հաշվի առնելով սովորողների կարիքներն ու շահերը, ինչպես նաեւ՝ դպրոցի մարդկային եւ ֆինանսական ռեսուրսները: Ազգային ուսումնական պլանում տրված ժամային ցանցը միայն առաջարկություն է:

❒ Ազգային ուսումնական պլանում այլեւս նկարագրված չեն առարկայական ամբիոնների ու դասղեկների գործառույթները: Դպրոցներն իրենք կարող են որոշել, թե ինչ գործառույթներ են իրականացնելու դպրոցական համայնքի անդամները, ու ինչպիսին է լինելու դպրոցի կառուցվածքը:

❒ Մասնավոր դպրոցի օտարալեզու ծրագրում ընդգրկված օտարերկրյա քաղաքացիների համար պետական լեզվի ուսուցման մակարդակները որոշվում են՝ ըստ դասավանդման տարիների(Լեզուների եվրոպական ընդհանուր առաջարկությունների շրջանակի հիման վրա):

❒ Վրացական բաժանմունքում/դպրոցում հանվել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար սահմանափակումը, որը ենթադրում է՝ 10 դիմորդի դեպքում մայրենի լեզվի ուսուցման պահանջ: Հետեւաբար, վրացական բաժնում սովորելու դեպքում, աշակերտին մայրենի լեզվի անհատական ուսուցման հնարավորություն կտրվի:

Հարկ է նշել, որ հաստատվել է նաեւ դասագրքերի համաձայնեցման կարգը, որի հիման վրա մասնավոր եւ հանրակրթական դպրոցները կարող են ուսումնական գործընթացում կիրառել գրիֆ չշնորհված, նախարարության հետ համաձայնեցված դասագրքեր:

Ըստ Վրաստանի ԿԳ նախարարության կայքի փոխանցմամբ՝ զուգահեռաբար շարունակվում է առարկայական չափորոշիչների վերանայման գործընթացը եւ սկսվել է առարկայական խմբերի ձեւավորումը, որում ներգրավված են գործող ուսուցիչներ, ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ ու հոգեբաններ: Վերանայման գործընթացը կավարտվի 2024 թվականի գարնանը:

Պատրաստեց՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԹԱՏՐՈՆ

ՓԱՅԼՈՒՆ ՌԵԺԻՍՈՒՐԱ, ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻ ԽԱՂ... ԵՎ ԱՅՍ ԱՄԵՆԸ ԱԴԱՄՅԱՆՅԱՆՑԻՆԵՐԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒ ԱՌԱՋՆԱԽԱՂԻ ՄԱՍԻՆ

Ընդամենը քսանչորս ժամ տարբերությամբ, նոյեմբերի 22-ին եւ 23-ին Թբիլիսիի Ա.Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնի փոքր դահլիճում Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը հանդիսատեսի դատին հանձնեց միանգամից երկու՝ Յասմինա Ռեզայի «ART» (Արվեստ) եւ Սլավոմիր Մրոժեկի «Բաց ծովում» առաջնախաղերը: Բեմադրիչ-ռեժիսորները թատրոնի երիտասարդ սերունդն են, դերասանական հարուստ փորձ ու ճանաչելիություն ունեցող Դավիթ Բարսեղյանը եւ Արթուր Գասպարյանը:

Հատկանշական է պիեսների ընտրությունը: Իմաստով երկուսն էլ՝ խորը, երկուսն էլ՝ կյանքի բացասական այն իրավիճակներն ու անկանխատեսելի հանգամանքները վեր հանող, որոնք սովորաբար վտանգում ու փորձության են ենթարկում մարդկային ամենանուրբ հարաբերություններն ու զգացումները՝ ընկերությունը, մարդասիրությունը, անձնազոհությունը, անկաշառությունը, նորից խոսում թույլի դեմ ուժեղի հաղթանակի, ոգու ազատության մասին...

Դավիթ Բարսեղյանն արդեն 10-ից ավելի տարիներ թատրոնում է: Այս տարի նա ավարտեց Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան կինոյի եւ թատրոնի պետական համալսարանի ռեժիսորական բաժնի մագիստրատուրան (ղեկ.՝ Գիորգի Կիտիա)՝ որպես դիպլոմային աշխատանք ընտրելով ժամանակակից եւ հանրաճանաչ ֆրանսիացի արձակագիր եւ դրամատուրգ Յասմինա Ռեզայի (ծնվ.՝ 1959թ.)՝ «Մոլիերի», «Լոուրենս Օլիվյեի» եւ «Թոնիի» մրցանակակիր «Արտ» պիեսը:

Պիեսը երեք ընկերոջ մասին է: Նրանցից մեկը ձեռք է բերում կտավ՝ ամբողջությամբ սպիտակ, որը եւ դառնում է վաղեմի ընկերներին միմյանց դեմ հանող կռվախնձորը: Սակայն, ի վերջո...

- ...Ընկերությունը հաղթում է, որը եւ պիեսն ընտրելու իմ առաջնային դրդառիթն է,- **«Վրաստանի» հետ զրույցում ասում է Դավիթ Բարսեղյանը:** *- Այս պիեսն ընթերցել եմ վաղուց եւ, երբ դիպլոմային աշխատանքի ընտրության անհրաժեշտությունն ունեցա, այլեւս երկար չեմ մտածել: «Արտը» ժամանակին, Թբիլիսիի Կ.Մարջանիշվիլու անվան պետական դրամատիկական թատրոնում բեմադրել է անվանի ռեժիսոր Թեմուր Չխեիձեն, այն երեսուն տարի խաղացանկի մնայուն ներկայացումներից է եղել: Ուստի, մեծ պատվով եմ բերում ներկայացումը մեր թատրոն՝ փորձելով ինձ ռեժիսորի դերում: Շնորհակալ եմ վաղուց ընկեր դարձած իմ գործընկերներին, դերակատարներ Աշոտ Սիմոնյանին, Էդուարդ Մուրադյանին, Սերգեյ Սաֆարյանին, եթե չլիներ նրանց փայլուն խաղը, ինչպես նաեւ Աննա Բերիշվիլու նկարչական ձեւավորումը, մեր գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի քաջալերող խոսքն ու խորհուրդը, հաստատ ներկայացումն այն հաջողությունը չէր ունենա, որն ունեցավ: Հանդիսատեսի արձագանքը բավական ջերմ էր ու ոգեւորող՝ ռեժիսորական իր առաջին փորձը հանդիսատեսին ներկայացնող ռեժիսորիս համար:*

Արդեն հաջորդ օրը, թբիլիսյան հանդիսատեսը վայելեց երկրորդ պրեմիերան: Երեւանի թատերական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ռեժիսուրայի բաժնի շրջանավարտ (ղեկ.՝ Նունե Խեչումյան, Մայիս Սարգսյան), ադամյանականի դերասան Արթուր Գասպարյանի բեմադրությամբ ներկայացվեց լեհ դրամատուրգ Սլավոմիր Մրոժեկի (1930-2013) մեկ գործողությամբ տրագիկոմեդիան: Բեմադրական հետաքրքիր լուծումների շնորհիվ, Մրոժեկի «Բաց ծովում» ստեղծագործությունը, որը հեղինակը գրել է 1961 թվականին, պատմում է լաստանավում հայտնված երեք անծանոթի մասին, ում փրկվելու մոլուցքն ու սովի այլեւս անդիմադրելի զգացողությունը, ջնջում են մարդկային նվիրական արժեքները՝ առաջ բերելով երեքից մեկին ուտելու կենդանական բնազդը եւ արդեն ուժեղի մոտ թույլի պարտությունը:

- Մրոժեկի ստեղծագործություններից առաջինն ընթերցել եմ «Էմիգրանտները»: Նրա գործերն արդիական ու համամարդկային են, ուստի ընտրությունս պատահական չէր,- **խոստովանում է Արթուր Գասպարյանը**: *- Ազատություն ու արդարություն քարոզող մեր օրերում իրականում անազատությունն ու անարդարությունն ավելի շատ են, եթե թույլ ես՝ կպարտվես, որքան էլ ազնվություն կրես մեջդ: Այդ ամենը բացահայտվում է կյանքի տարբեր իրավիճակներում, որտեղ հայտնվել կարող ենք բոլորս:*

Երախտիքս յուրաքանչյուրին, ով աջակցեց ներկայացման կայացման մեջ. ու նախեւառաջ՝ Արմեն Բայանդուրյանին, ում հետ կայացավ իմ առաջին ռեժիսորական փորձը Գոգոլի «Ռեւիզոր»-ում, եւ ում անմիջական խորհրդատվությամբ կյանքի կոչվեց «Բաց ծովում» ներկայացումը: Շնորհակալ եմ մեր հանրաճանաչ նկարիչ Մայիս Մխիթարյանին եւ, անշուշտ, դերակատարներին՝ Աշոտ Սիմոնյանին, Դավիթ Բարսեղյանին, Արամ Միքայելյանին, Էդուարդ Մուրադյանին, Նարեկ Բայանդուրյանին, ոչ միայն խաղի, այլեւ երաժշտական ձեւավորման համար: Եվ, իհարկե, շնորհակալությունս հանդիսատեսին՝ ամենակարեւոր «դերակատարին», ով պայմանավորում է թատրոնի ապագան:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

Լուսանկարները՝ Աննա Պեչենեւսկայայի եւ Քրիստինե Էլոյանի

ՌՈՒՍԹԱՎԵԼՅԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ...

Օրերս Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան ազգային թատրոնը վերադարձավ Չինաստանից, ուր մեկնել էր մասնակցելու Շենժենի միջազգային թատերական փառատոնին՝ ներկայացնելով հռչակավոր ռեժիսոր, թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուայի «Մարիա Կալաս: Դաս:» բեմադրությունը:

...ԳՈՐԻՍՅԻՆԵՐԸ ԿԽԱՂԱՆ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԲԵՄԻՆ

Հիշեցնենք, որ նոյեմբերի 27-ին, ժամը՝ 19:00-ին Հայաստանի Գորիս քաղաքի Վ.Վաղարշյանի անվան պետական թատրոնը արդի դրամատուրգ Սամվել Խալաթյանի «Վերջին ծաղրածուն» տրագիկոմեդիայով (բեմադրությունը՝ Հակոբ Ղազանչյանի) կներկայանա Շ.Ռուսթավելու անվան ազգային թատրոնի էքսպերիմենտալ դահլիճում:

... ԻՍԿ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ՀՅՈՒՐԱԽԱՂՈՎ ԿՄԵԿՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը Սլավոմիր Մրոժեկի «Բաց ծովում» ներկայացումով (ռեժիսոր՝ Արթուր Գասպարյան) նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 3-ը մեկնում է հյուրախաղերի Հայաստան: Ներկայացումը կբեմադրվի Հրազդան, Արտաշատ, Երեւան քաղաքների թատրոններում:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԻՆՉՊԻՍԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ ԿԱՆԱՅՔ

Հետաքրքիր կլիներ իմանալ, գոյություն ունի՞ արդյոք տղամարդու նկատմամբ կնոջ վերաբերմունքի որեւէ չափորոշիչ, օրինակ, ինչպիսի տղամարդկանց չեն սիրում կանայք:

Հ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բոլնիսի

Այն տղամարդուն, որը կարծում է, թե միշտ ճիշտ է:

Այդպիսի տղամարդն իրեն իրավունք է տալիս՝ դատել մարդկանց: Առաջին հանդիպման ժամանակ նա արդեն կնոջը հասկացնում է, թե կինը ինչ կարող է անել, ինչ՝ ոչ: Այդպիսի պահվածքը կնոջ մոտ առաջացնում է միայն զայրույթ: Արարքները ցանկացած մարդու անձնական գործն են: Եթե կնոջ հետ առաջին հանդիպմանը ինչ-որ բան չեք հավանում, մի շարունակեք հանդիպել նրա հետ: Ցանկացած մարդ ունի առավելություններ ու թերություններ: Որոշ բնավորության գծերի հետ կարելի է հաշտվել, որոշների հետ՝ ոչ: Մարդկանց փոխելը անշնորհակալ գործ է:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՏԱԿ ՉԵՆ ԱՆՈՒՄ



Վերջին ժամանակներում տեսողության հետ կապված հիմնախնդիրներ են ծագել: Դիմեցի բժշկի, ստուգեց, ասաց, որ աստիգմատիզմով եմ հիվանդ, եւ մի քսան րոպե բացատրում էր, թե դա ինչ է նշանակում: Ասածներից ոչինչ չհասկացա, որոշեցի դիմել յեզ. գուցե դո՞ւք օգնեք պարզաբանել, թե ի՞նչ է աստիգմատիզմը, ինչպե՞ս կարելի է այն բուժել:

Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆ
Կասպիի մունիցիպալիտետ

Աստիգմատիզմը տեսողության խանգարում է, որի ժամանակ փոխվում է եղջերաթաղանթի կամ ոսպնյակի սֆերիկ ձեւը՝ կորությունը: Աստիգմատիզմի ժամանակ ցանցաթաղանթի վրա լույս արձակող կետի պարզ պատկեր ստանալ հնարավոր չէ: Այստեղից էլ լատիներենից «աստիգմատիզմ» անվանումը (կիզակետի բացակայություն): Այդ իսկ պատճառով տեսողությունը կորցնում է ֆոկուսը, պատկերները մեկ կամ երկու աչքերում էլ ստացվում են մշուշոտ, ոչ հստակ եզրերով: Եթե գծենք սեւ ուղիղ գիծ ու նայենք դրան, ապա աստիգմատիզմի ժամանակ այն կերեւա կիսասեւ երանգներով, ավելի լայն, քան իրականում կա. մի տեսակ աղավաղված պատկեր է ստացվում:

Աստիգմատիզմը լինում է բնածին ու ձեռքբերովի: Երկրորդ դեպքում, աստիգմատիզմի պատճառ կարող են լինել վնասվածքները, աչքի բորբոքային հիվանդությունները: Տեսողության խանգարման այս տեսակը վտանգավոր է ոչ միայն տեսողության թուլացման առումով, այլեւ, եթե ժամանակին այն չկարգավորվի, ապա կարող է առաջանալ շլություն, իսկ տեսողությունը խիստ կթուլանա:

Բուժման հիմնական մեթոդը հատուկ կարգավորող ակնոցներն են, կոնտակտային ոսպնյակները եւ լազերային կորեկցիան: Ակնոցներն ու կոնտակտային ոսպնյակները նշանակում է ակնաբույժը: Լազերային կորեկցիայի միջոցով, վիրահատական ճանապարհով փոխվում է եղջերաթաղանթի հաստությունը, ինչը հնարավորություն է տալիս վերականգնել տեսողությունը, ֆոկուսը՝ ցանցաթաղանթի վրա:

v Աստիգմատիզմը ժողովրդական միջոցներով բուժել հնարավոր չէ:

v Աչքի վարժությունները նույնպես չեն կարող վերականգնել թուլացած տեսողությունը, պարզապես մի փոքր կթեթեւացնեն աչքի լարվածությունը:

v Լիարժեք տեսողություն հնարավոր է ունենալ լազերային կորեկցիայի օգնությամբ:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄ

Բոլորիս ծանոթ է այդ զգացումը: Շատերը դրա ու տարբեր կանխատեսումների (օրինակ՝ երազի, սնահավատության եւ այլն) հետ զուգահեռներ են անցկացնում:

Չեխ հոգեբան Միլան Ռիզլը նույնպես մի հետաքրքիր դեպք է հիշատակել: Պայթուցիկ նյութերի ֆաբրիկայի բանվորներից մեկին, աշխատանքի գնալիս, միշտ իր շունն էր ուղեկցում: Սակայն, մի օր շունը կես ճանապարհին կանգ է առնում, տիրոջը ստիպում՝ տուն վերադառնալ: Բայց գործը մնում է գործ: Ի դժբախտություն իրեն, տերը, շան ազդանշաններին ուշադրություն չդարձնելով, մենակ է ճանապարհը շարունակում: Հետո կինը զանգահարում է ամուսնուն ու հայտնում, որ շունը կաղկանձում է եւ ուզում է տնից դուրս թռչել... Այդ օրը ֆաբրիկայից ոչ ոք տուն չի վերադառնում, քանի որ պայթյուն է տեղի ունենում, ու բոլորը զոհվում են:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

ՏՂԱ ԵՔ ՄԵԾԱՑՆՈ՞ՒՄ... ԳՈՎԵՔ ՆՐԱՆ, ԽՐԱԽՈՒՍԵՔ, ՀԻԱՑԵՔ

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵՇՏ ՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ԵՆ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում խմբագրության էլեկտրոնային փոստով ստացված թբիլիսցի Ե.Գ.-ի ստորագրությամբ նամակը:

Հինգ տարի առաջ, ավտովթարի արդյունքում, կորցրեցի ամուսնուս: Հիմա միայնակ մայր եմ, ունեմ 6 տարեկան տղա երեխա: Օգնող չունեմ, ստիպված էի երեխային տանել մանկապարտեզ, որպեսզի կարողանայի աշխատել: Անկեղծ ասած, երեխայի դաստիարակությամբ էլ շատ քիչ էի զբաղվում, ամեն ինչ ինքնահոսի էր մատնվել: Ու հիմա նկատում եմ, որ շատ հաճախ չի ենթարկվում, իսկ երբ նկատողություն եմ անում, ավելի համառ ու իրասածի է դառնում: Չգիտեմ՝ ինչպես վարվել:

Ցավոք, կինը հաճախ ստիպված է լինում միայնակ զբաղվել երեխայի դաստիարակությամբ: Նման դեպքերում մայրերը շատ սխալներ են թույլ տալիս, հատկապես՝ տղա երեխաների հարցում, մոռանալով, որ տանն ապագա տղամարդ է ձեւավորվում: Այս խորհուրդները կօգնեն այդ խնդիրը լուծել:

♦Երբեք մի ծիծաղեք ձեր որդու թեկուզ ամենաչնչին սխալի կամ թերացման վրա, քանի որ տղամարդու սրտում կնոջ ծաղրը շատ խոր վերք է թողնում, եւ նա այդ մասին կարող է հիշել ողջ կյանքում:

♦Պատասխանեք երեխայի բոլոր հարցերին եւ մի փորձեք խուսափել «Դե', որովհետեւ այդպես է» կամ՝ «Մեծանաս՝ կիմանաս» պատասխաններով: Եթե նույնիսկ հարցի պատասխանը չգիտեք, անկեղծ խոստովանեք այդ մասին: Ասացեք, որ հարցը ձեզ փակուղի է մտցրել, եւ պետք է մտածեք:

♦Որեւէ որոշում կայացնելիս՝ ձեր տղայից խորհուրդ հարցրեք : Ձեք էլ կարող պատկերացնել, թե երեխան իր անմիջականությամբ ինչ հեշտությամբ կարող է լուծում տալ որեւէ «մեծ» խնդրի: Օրինակ, «Ի՞նչ ես կարծում, ինչպիսի՞ն պետք է լինի մեր նոր բնակարանը», «Ինչո՞ւ եմ ես անընդհատ որեւէ մեկի հետ վիճում, ի՞նչն եմ սխալ անում»: Այդ կերպ տղան կսովորի տղամարդու պես որոշում կայացնել, իսկ դուք ցույց կտաք ձեր վստահությունն ու հարգանքը նրա նկատմամբ:

♦Ընդմիշտ մոռացեք՝ «Ախր ես քեզ ասում էի, չէ՞, որ այդպես կլինի» արտահայտությունը: Դուք իրավունք չունեք մրցել նրա հետ: Իսկ «Ես ասում էի, չէ՞» արտահայտությունը հենց մրցություն է, որտեղ մարդը հրճվում է իր հաղթանակով: Ձեր ճշմարտացի լինելու համար ձեր մտքում ուրախացեք:

♦Գովեք նրան: Հիացեք, իսկ եթե ինչ-որ բան այն չէ, ուղղեք, սակայն ոչ թե՝ «Բայց այս մի բանը սխալ ես արել» նկատողությամբ, այլ՝ «Շատ լավ է, միայն թե այս մեկն ուղղիր» խորհրդով: Երբ նա մեծանա, արդեն ինքնուրույն կտեսնի, թե ինչն է պետք ուղղել:

♦Աջակցեք նրան իր բոլոր երազանքների հարցում, եթե նույնիսկ ասում է՝ «Ուզում եմ ստորջրյա հնէաբան դառնալ»: «Իսկ հիմա էլ ուզում եմ նկարիչ դառնալ»... Կրկին հրաշալի է: «Արդեն որոշեցի, ծրագրավորող եմ ուզում դառնալ»: Դա էլ է գովելի: Դուք պարզապես աջակցեք, մշտապես թեմատիկ գրքեր գնեք: Իսկ իրականում անկախ ամեն ինչից նա կկողմնորոշվի միայն 20 տարեկանին մոտ:

♦Եթե երեխան լաց է լինում, նշանակում է դժբախտություն է պատահել: Դա կարող է ձեզ համար մի չնչին բան լինել (օրինակ՝ մանկապարտեզում իր չսիրած բրնձով շիլան են տվել, սիրելի հնդկածավարի փոխարեն), բայց նրա համար՝ մեծ: Նրա համար ցանկացած ձախորդություն հսկայական դժբախտություն է, քանի որ երեխայի աշխարհը դեռեւս մեծ չէ, որ շիլան կորչի դրա ծավալներում... Դուք պետք է հանգստացնեք ու սփոփեք նրան: Դա լինելու է նրա հետ ձեր ապագա փոխհարաբերությունների կարեւոր կանոնը: Երեխան չպետք է անմխիթար արտասվի:

♦Երբեք նրա գլխին խրատ մի կարդացեք: Միշտ նրա կողմից եղեք՝ ոչ միայն խոսքով, այլ գործերով: Եթե ուսուցիչը բողոքել է նրանից, մի բղավեք վրան: Մարդկանց ներկայությամբ նրա արժանապատվությունը մի վիրավորեք: Այդ դեպքում նա արդեն չի նեղվի նույնիսկ ինտիմ ու անձնական հարցերով ձեզնից խորհուրդ հարցնել, համոզված լինելով, որ դուք իր վրա չեք զայրանա կամ չեք ասի՝ «Դա ի՞նչ հարց է» կամ՝ «Չես ամաչո՞ւմ»: Նա այդպես կվստահի ձեզ, ինչը յուրաքանչյուր մոր երազանքն է:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *- Ձեզ դպրոց ենք կանչել՝ ձեր երեխայի վատ վարքի պատճառով: Նա իրեն շատ վատ է պահում դպրոցում:*

- Հետո ինչ: Նա տանն էլ է իրեն վատ պահում, բայց մենք ձեզ հո տուն չենք հրավիրում:

☺ *- Մի խոսքով, ոչինչ չես կարողանում անել՝ ճաշ եփել չգիտես, լվացք անել չգիտես, ամաններ չես լվանում... Ասա խնդրեմ, ո՞ր հիմար աղջիկը կամուսնանա քեզ հետ:*

☺ *Ավտոբուսում՝ կինը ամուսնուն.*

- Անուղղելի կնամոլ ես, պատրաստ ես բոլոր կանանց ետեւից վազել...

Կողքի կանգնած կինը.

- Ասացեք, դուք ձեր ամուսնու հետ կռվո՞ւմ եք, թե՞ գովազդում եք:

☺ *Հնչում է դռան զանգը, շեմին անկոչ հյուրեր են:*

- Գոնե զգուշացնեիք,- հանդիմանում է տանտերը:

- Մենք ուզում էինք ձեզ տանը բռնացնել:

☺ *- Դուռը բացեք, ոստիկանությունն է:*

- Ձեմ բացի, անցյալ անգամ էլ բացեցի, մինչեւ հիմա ձեզանից նեղացած եմ:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ *Եթե ուզում ես ընկերներիդ ծառայություն մատուցել, ապա պետք չէ լռության մատնել նրանց թերությունները:*

ԴԵԲԻԴՈՒՐ

☞ *Ինչ-որ ուզում ես, սիրով ավելի արագ կստանաս, քան՝ սուր ճոճելով:*

ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ

☞ *Ոչ թե մեռնելուց է պետք վախենալ, այլ՝ փուչ ապրելուց:*

ԲԵՐՏՈԼԴ ԲՐԵԽՏ

☞ *Ապրիր մարդկանց հետ այնպես, որ քո բարեկամները չարակամներ չդառնան, իսկ չարակամները՝ բարեկամներ:*

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ

☞ *Ինստիտուտում սովորելիս՝ այնպես յուրացրի սուտ խոսելու արվեստը, որ հիմա իմ ստերին ինքս էլ սկսել եմ հավատալ:*

Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող
Նինոծմինդա

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՍԱՀԱՐՑԵՐԻՆ

Նոյեմբերի 24-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի հանրային հեռուստաընկերության, վարչապետի ֆեյսբուքյան էջով եւ Կառավարության յութուբյան պաշտոնական ալիքով, ուղիղ եթերում պատասխանեց Հայաստանի քաղաքացիների եւ Սփյուռքի հայրենակիցների տեսահարցերին

Հայաստանի վարչապետին WhatsApp հավելվածի +374 44 900 800 հեռախոսահամարին նախօրոք ուղարկված տեսահարցերն առնչվում էին հայ-ադրբեջանական դիմակայությանը, Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին, հայ-ռուսական հարաբերություններին, ԱՄՆ եւ Եվրամիության հետ Հայաստանի հարաբերություններին, Հայաստանի միջազգային քաղաքականության վեկտորին:

Վարչապետին հասցեագրված բավական մեծ թվով հարցեր վերաբերում էին երկրի էկոնոմիկայի, առողջապահության եւ սոցիալական ոլորտի զարգացման, Զինված ուժերի արդիականացման, երկրում միջքաղաքական կառուցողական համագործակցության հաստատման անհրաժեշտությանը:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» ՎԵՑԵՐՈՐԴ ԱՌԱՋԱՐԿՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Հայկական կողմը ադրբեջանական կողմին է փոխանցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ «Խաղաղության պայմանագրի» վերաբերյալ իր 6-րդ առաջարկը: Այս մասին գրառում է արել Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը:

«Ադրբեջանի հետ «Խաղաղության պայմանագրի» ստորագրմանն ուղղված դիվանագիտական ջանքերի ակտիվացման մասին վարչապետ Նիկոլ Փաշինյանի նոյեմբերի 18-ի հրապարակային հայտարարությունից հետո, հայկական կողմը ադրբեջանական կողմին է ներկայացրել համաձայնագրի իր 6-րդ առաջարկը: Հայաստանը շարունակում է հավատարիմ մնալ նախկինում հայտարարված սկզբունքների հիման վրա հարաբերությունների կարգավորման փաստաթղթի կնքմանն ու ստորագրմանը»,- նշված է Հայաստանի արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՔ. ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Նոյեմբերի 21-23-ը պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Իրաքի նախագահ Աբդուլ Լատիֆ Ռաշիդը: Այցի շրջանակներում, Իրաքի նախագահը հանդիպումներ ունեցավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ, մասնակցեց Գյումրիում հայ-իրաքյան «Միավորելով նորարարությունը» համաժողովին:

Հայաստանի վարչապետի եւ Իրաքի նախագահի հանդիպմանը քննարկել են տնտեսության, առեւտրաշրջանառության, բարձր տեխնոլոգիաների, էներգետիկայի, ջրային պաշարների, զբոսաշրջության ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցեր:

Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին վերաբերող հարցերին:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, Իրաքի նախագահ Աբդուլ Լատիֆ Ռաշիդի հետ Երեւանում կայացած հանդիպմանը, ներկայացրեց Հայաստանի կողմից առաջ քաշած «Խաղաղության խաչմերուկ» հայեցակարգը:

Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, Իրաքի նախագահ Աբդուլ Լատիֆ Ջամալ Ռաշիդը՝ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի ուղեկցությամբ, նոյեմբերի 23-ին Գյումրիի Սեւ Բերդ ամրոցում մասնակցեց հայ-իրաքյան «Միավորելով նորարարությունը» համաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԵԼ Է ԳՐԱՆՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՆՈՐ ՌԵԿՈՐԴ

Նոյեմբերի 23-ի Հայաստանի կառավարության նիստում երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում 2023 թվականի հոկտեմբերին արձանագրվել է 730 հազար գրանցված աշխատատեղ, ինչը բացարձակ ռեկորդային է երրորդ Հանրապետության պատմության ընթացքում:

- 2023 թվականի հոկտեմբերի տվյալներով, Հայաստանում գրանցված աշխատատեղերի նոր ռեկորդ ունենք՝ գերազանցել ենք 730 հազար թիվը: Պետք է արձանագրեմ, որ 2018 թվականի մայիսից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է շուրջ 183 հազար նոր աշխատատեղ, եւ մեր տնտեսական դինամիկան ցույց է տալիս, որ այդ աշխատատեղերը կշարունակեն ստեղծվել,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը հույս հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին, աշխատանքի շուկայում եւ տնտեսական համակարգում լիարժեք ներգրավելու արդյունքում, տնտեսական աճի դինամիկան ավելի լավը կլինի:

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԵՎ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄՅԱԿՆԵՐՆ ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի՝ նոյեմբերի 7-22-ը Փարիզում ընթացող 42-րդ նստաշրջանի ընթացքում, որոշում է ընդունվել Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հռչակավոր մարդկանց ու կարեւոր իրադարձությունների հոբելյանների» 2024-2025 թթ. օրացույցում ընդգրկելու վերաբերյալ:

Նշենք, որ Հայաստանի կողմից վերոնշյալ հայտերը ներկայացվել են գործընկեր երկրների հետ համատեղ՝ ստանալով զգալի աջակցություն մի շարք անդամ երկրների ու երկրների խմբի կողմից: Մասնավորապես, ֆրանսահայ հռչակավոր երգիչ, երգահան, դերասան Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանի վերաբերյալ հայտը համատեղ կերպով ներկայացվել է Հայաստանի եւ Ֆրանսիայի կողմից՝ Անդորրայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Մոնակոյի, Պորտուգալիայի, Սենեգալի ու ավելի քան 80 անդամ ունեցող ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆրանկոֆոն դեսպանների խմբի աջակցությամբ: Անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանի վերաբերյալ հայտը համատեղ կերպով ներկայացվել է Հայաստանի, Վրաստանի եւ Ուկրաինայի կողմից՝ ստանալով Կիպրոսի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լիբանանի եւ Լեհաստանի աջակցությունը:

1998 թվականից առ այսօր «Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրացույցում» ներառվել է Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված 25 հոբելյանական տարեթիվ:

Նախորդ երկամյակի համար հաստատվել էին Հայաստանի կողմից ներկայացված՝ Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցի եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնի 100-ամյա հոբելյանի հայտերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 23-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հայաստանում հավատարմագրված Եվրոպական միության եւ ԵՄ անդամ պետությունների դեսպանների հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Հայաստան-Եվրոպական միություն համագործակցությանն ու համատեղ ծրագրերին, մասնավորապես, Հայաստանում բարեփոխումների օրակարգին եւ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը ԵՄ կողմից ցուցաբերվող շարունակական աջակցությանը վերաբերող հարցեր, մտքեր փոխանակվեցին Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների շուրջ:

Քննարկվեցին տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր:

Նիկոլ Փաշինյանը պատասխանեց դեսպանների հարցերին եւ ներկայացրեց Հայաստանի կառավարության տեսակետները:

ԵՊՀ-ՈՒՄ ՀՐԴԵՀԻՉ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՄԱՀԱՑԱՎ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Երեւանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի նկուղային հարկում նոյեմբերի 17-ի առավոտյան տեղի է ունեցել պայթյուն՝ հրդեհի բռնկումով, որի արդյունքում, ԵՊՀ-ի աշխատակիցներից մեկը զոհվել է տեղում, երեք մարդ տեղափոխվել էր հիվանդանոց, այդ թվում՝ մեկը պարեկային ծառայության աշխատակից, որը ծխահարումով հոսպիտալացվել էր:

Հայաստանի առողջապահության նախարարության տարածած տեղեկատվության համաձայն, ԵՊՀ-ում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով տուժած քաղաքացիներից մեկի՝ համալսարանի աշխատակից Սիարոն Հակոբյանի կյանքը փրկել չի հաջողվել:

ԱՎՏՈՎԹԱՐ. 66 ՄԱՀ՝ 10 ԱՄՍՈՒՄ

Երեւանում, 2023-ի տարեսկզբից մինչեւ նոյեմբերի 1-ը, արձանագրվել է 1071 վթար, 604 վրաերթ, ընդհանուր՝ 1675 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց զոհ է դարձել 66 քաղաքացի:

Հայաստանի Քննչական կոմիտեի ներկայացրած վիճակագրության մեջ նշված է, որ 2023-ի 10 ամիսներին մայրաքաղաքում 8-ով ավելի մահվան ելքով ՃՏՊ-ներ են գրանցվել, քան ամբողջ 2022-ի ընթացքում:

ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՐՄՐՈՒԿՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Հայաստանում կարմրուկի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը մեկ շաբաթում ավելացել է 6-ով եւ հասել 500-ի: Հայաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, այս շաբաթ հոսպիտալացվել է 1 քաղաքացի: 321 բուժառու արդեն դուրս է գրվել: Վարակվածներից 354-ը երեխաներ են, 146-ը՝ մեծահասակներ:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2023»

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԱՍՏԱՍԻԱՆ ԵՎ «ՌԱՆԻԱՆԱՆ» ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ «YAN GIRLS» ԽՈՒՄԲԸ

Նոյեմբերի 26-ին, Ֆրանսիայի Նիցցա քաղաքում կմեկնարկի 21-րդ մանկական Եվրատեսիլ մրցույթը, որի անմիջական ռեպորտաժը» Վրաստանի Առաջին ալիքով եթեր կարձակվի ժամը 19:00-ին:

Մանկական երգի փառատոնին Վրաստանի ներկայացուցիչներ Անաստասիա Վասաձեն, Նիկոլոզ Խառատը եւ Օթո Բազերաշվիլին հանդես կգան «Over The Sky» երգով: Վրաստանի ներկայացուցիչները փառատոնին հանդես կգան 10-րդ համարի ներքո:

Ինչ վերաբերում է «Մանկական Եվրատեսիլ - 2023» երգի հեղինակավոր մրցույթում Հայաստանի պատվիրակ «Yan Girls» խմբին (Նանե, Նենսի, Կամիլա, Սյուզաննա, Աիդա), ապա այն հանդես կգա «Do It My Way» երգով: Խումբը ելույթ կունենա ութերորդը:

Վրաստանից ու Հայաստանից բացի, երգի փառատոնին մասնակցում են Ալբանիան, Էստոնիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իռլանդիան, Իտալիան, Մալթան, Նիդերլանդները, Հյուսիսային Մակեդոնիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Իսպանիան, Միացյալ Թագավորությունն ու Ուկրաինան:

Նշենք, որ քվեարկությունը կսկսվի նոյեմբերի 24-ին, ժամը 23:00-ից: Տվյալ երկրի, օրինակ, Վրաստանի եւ Հայաստանի օգտին կարող են քվեարկել նաեւ Վրաստանից ու Հայաստանից: Քվեարկել կարող են նաեւ այն երկրներից, որոնք մրցույթին չեն մասնակցում: Նոյեմբերի 24-ից հնարավոր կլինի քվեարկել jesc.tv կայքի միջոցով, որտեղ կլինեն բոլոր ելույթների կարճ տարբերակները: Դրանք դիտելուց հետո հնարավոր է քվեարկել ցանկացած մասնակցի օգտին: Ելույթներից հետո, ձայները կվերածվեն միավորների: Մրցույթի արդյունքները կորոշեն հեռուստադիտողը եւ ժյուրին՝ 50/50 հարաբերակցությամբ: Ինչպես միշտ, հաղթում է այն երգը, որը հավաքել է առավելագույն միավորները:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻՆ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, քաղաքապետարանը ամանորյա միջոցառումների համար անհրաժեշտ ծառայությունները կատարում է առանց էլեկտրոնային մրցույթի, որի համար բյուջեից նախատեսվում է ծախսել 6 մլն 501 հազար 641 լարի:

Քաղաքապետի հայտարարությամբ, Ամանորյա միջոցառումները Թբիլիսիում կանցկացվեն 2023 թվականի դեկտեմբերի 15-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 7-ը: Տոնական միջոցառումները կանցկացվեն Օրբելիանու հրապարակի հարեւանությամբ, «Չոր» կամրջի եւ «Մայրենի լեզվի պուրակում» կկազմակերպվի «Ամանորյա քաղաք», կանցկացվի Սուրբ Ծննդյան տոնավաճառ, Ռուսթավելիում՝ խորհրդարանի շենքի դիմաց, կկանգնեցվի գլխավոր տոնածառը: Հանրապետության հրապարակում կանցկացվի ամանորյա համերգ:

ՍՊՈՐՏ

ՌԵԳԲԻ. ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՄԵՋ ԴԱՐՁԱՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում, ռեգբիի՝ մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում, Վրաստանի հավաքականը 19:3 հաշվով պարտության մատնեց Պորտուգալիայի հավաքականին եւ հինգերորդ (2018, 2019, 2020-ին առաջնությունը չի անցկացվել, 2021, 2022 թվականներին) անգամ անընդմեջ նվաճեց Եվրոպայի ուժեղագույնի կոչումը:

ՖՈՒՏԲՈԼ. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐԻ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ...

Ա ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	Մ
Իսպանիա	8	7	0	1	21
Շոտլանդիա	8	5	2	1	17
Նորվեգիա	8	3	2	3	11
Վրաստան	8	2	2	4	8
Կիպրոս	8	0	0	8	0

Ավարտվեցին Եվրոպայի ֆուտբոլի 2024 թվականի առաջնության նախընտրական խմբային փուլի հանդիպումները: Գերմանիայում անցկացվելիք առաջնության եզրափակիչ փուլի 24 մասնակիցներից 21-ը հայտնի են, իսկ մնացած երեք ուղեգրերի ճակատագիրը կպարզվի մարտի 21-ին անցկացվելիք փլեյ-օֆֆի արդյունքներով: 2024 թվականի առաջնությանը մասնակցելու իրավունք են նվաճել Գերմանիայի (տանտիրոջ քվոտայով), Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Բելգիայի, Անգլիայի, Դանիայի, Թուրքիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Ալբանիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Շոտլանդիայի, Սլովակիայի, Նիդերլանդների, Սերբիայի, Սլովենիայի, Չեխիայի, Իտալիայի եւ Խորվաթիայի հավաքականները:

«Ա» ենթախմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը, խմբային եզրափակիչ հանդիպումն անցկացրեց Իսպալիայում եւ 1:3 հաշվով զիջեց տեղի հավաքականին: Այսպիսով, Վրաստանի հավաքականը 8 միավորով խմբում զբաղեցրեց նախավերջին՝ 4-րդ հորիզոնականը, չնայած, եթե թիմը Ազգերի լիգայի մրցաշարի «C» դիվիզիոնում հաղթող ճանաչվի, նա կստանա մայրցամաքի առաջնության եզրափակչին անմիջական մասնակցության ուղեգիր: Մարտի 21-ին Վրաստանի հավաքականը փլեյ-օֆֆի շրջանակներում, կհանդիպի Լյուքսեմբուրգի հավաքականի հետ եւ, հաղթանակի դեպքում, մարտի 26-ին ուղեգրի համար վճռորոշ մրցամարտում իր ուժերը կչափի Հունաստան-Ղազախստան հանդիպման հաղթողի հետ:

... ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՈՒՂԵԳՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻՑ

D ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	Մ
Թուրքիա	8	5	2	1	17
Խորվաթիա	8	5	1	2	16
Ուելս	8	3	3	2	12
Հայաստան	8	2	2	4	8
Լատվիա	8	1	0	7	3

Ինչ վերաբերում է «D» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա հայ ֆուտբոլիստները խմբային եզրափակիչ հանդիպումն անցկացրին մրցակցի դաշտում եւ 0:1 հաշվով պարտություն կրեցին Խորվաթիայի հավաքականից: Հայաստանի հավաքականը 8 միավորով հանգրվանեց խմբի նախավերջին՝ 4-րդ հորիզոնականում, եւ զրկվեց մայրցամաքի առաջնության եզրափակչի ուղեգրի համար պայքարին մասնակցելու հնարավորությունից:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Զորամաս, որ պատերազմի ժամանակ եւ հաղթությունից հետո ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի ու ավար բերելու: 9.Յար: 10.Ազգ Իսպանիայում: 11.Սերբիայի մայրաքաղաքը: 13.Հայ փիլիսոփա, հասարակական-եկեղեցական գործիչ ... Կողբացի: 16.Ծովափնյա առողջարան ՌԴ-ում: 17.Մարդկանց խումբ, որը իրականացնում է ընդհանուր գործողություն: 19.Անկասկած: 22.«... վրա, Քեռի Քուչի»: 24.Նշանավոր շվեդ գրող ... Բերգման: 25.Հայկական ֆուտբոլային թիմ: 27.Միջնադարյան խոշոր վանքային համալիր Հայաստանում: 29.Արեւելյան որոշ ժողովուրդների գլխի փաթթոց: 32.Ջրաներկ: 33.Ուկրաինացի կոմպոզիտոր Պավել ...: 35.Թույլ, դժգույն: 37.Պտուղների հատիկաձեւ սերմերը: 39.Կոնդակ, գրություն: 40.Խաչածաղկավոր բույս: 43.Բացի ասվածից՝ որոշվածից: 44.Վրացի դերասան ... Աբաշիձե: 47.Ոչխարի բուրդ: 49.Սիրեցյալ: 50.Եվրամիության անդամ երկրների դրամական միավորը: 53.Ներքեւ (հակ.): 54.Սապատավոր կենդանի: 55.Վրան աղ քսել: 57.Էլեկտրոնային հաշվիչ մեքենա: 58.Քաղաք Թուրքիայում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հետեւել: 2.Պարատեսակ: 3.Ամրոց Ախալցիխեում: 4.Ոսկուց պատրաստված: 5.Հավատ, դավանանք: 6.Տատիկի թելի գունդը: 8.Քաղաք եւ նավահանգիստ Իսպանիայում: 12.Լողլող մարդու քայլ: 14.Տավարի ծնկի ոսկոր: 15.Գաղափար: 18.Աշխարհամաս: 19.Կոպիտ, անտաշ: 20.Թխվածք: 21.Մարդու երեսի մազը: 23.Ներմուծում: 26.Ե'վ նկար, ե'ւ գործվածք: 28.Այն, նա (արեւմտ.): 29.Մոնթե Մելքոնյանի մարտական անունը: 30.Օղի (ժող.): 31.Ջրապտույտ, հորձանուտ: 34.Մեքենա, որը ուրիշ մեքենա է քաշում, քարշան: 36.Անճոռնի, անձեւ: 38.Փոքր Արարատ: 41.Հուղարկավորություն (ժող.): 42.Հունաստանի ամենախոշոր եւ Միջերկրական ծովի՝ մեծությամբ հինգերորդ կղզին: 45.Կարուձեւ անող արհեստավորի «զենքերից»: 46.Որեւիցե: 48.Արաքս, Երասխ: 51.Ողնաշար, ողնոսկր: 52.Դեռ (ժող.): 56.Արի:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Աշտարակեցի: 6.Աբաս: 10.Ֆերմա: 12.Վաֆլի: 14.Հաբեթ: 16.Աղորիք: 19.Բու: 20.Առու: 21.Արա: 22.Անուշ: 23.Կար: 24.Սիբիր: 26.ՄԱԿ-ի: 27.Սեդա: 28.Ալլա: 31.Ուր: 33.Աքրա: 36.Պե: 38.Նաիրի: 39.Ներկան: 41.Իմ: 42.Ապագա: 43.Կան: 44.Ձի: 45.Փական: 47.ԵԱՏՄ: 49.Վերա: 50.Բաթ: 51.Բորդո: 54.Արտամետ: 55.Սաբա: 56.Լամա: 57.Ծիտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Աբեղա: 2.Տալվորիկ: 3.Ռաֆֆի: 4.Կարի: 5.Ցմահ: 7.Բամբակ: 8.Սանթուր: 9.Անհուշ: 11.Ելք: 13.Արաբիկա: 15.Եռաբլուր: 17.Ղասաբ: 18.Գարեջի: 19.Բուրաստան: 25.Ջափարիձե: 29.Արամե: 30.Լոպե: 32.Անբասիր: 34.Քիմիա: 35.Իսանի: 37.Երկար: 38.Նանա: 39.Նա: 40.Կակաբեթ: 45.Փեթակ: 46.Նար: 48.Մեթան: 49.Վատ: 50.Բրա: 52.Ոտ: 53.Ոստ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՑԱՐՈՒՈ: ՈՅԲՈԼՈՆՈ 0105, Գ.ԱՅՈՎՆԵԼՈՆ ՀՅՈՒՀԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ՈՅԲՈԼՈՆՈ, ՍԱՀԱՐՈՅԵԼՈՎ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445